ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ՔԻՄԻԱՆ

Մի շերամորդ իր կարճատև կյանքի ամբողջ ընթացքում ստեղծում է միայն մեկ բոժոժ: Ֆաբրիկայում այն մշակելուց և կծկելուց հետո ստացվում է 0,5 գրամ մետաքսաթել: 1000 մետաքսե հագուստ կարելու համար հարկավոր է աճեցնել մեկ միլիոն շերամորդ: Իսկ ամենանուրբ տեսակի 1000 կուլգ գուլպա գործելու համար՝ 80 000 շերամորդ:

Մինչդեռ նույն արտադրանքը կարելի է ստանալ... 80 կիլոգրամ փայտից:

1000 ձեռք բրդե կոստյումի կտորը մշակվում է 50 ոչխարից խուզած բրդից: Այդ ոչխարները աճեցնելու համար հարկավոր է երկու տարի: Յուրաքանչյուր տոննա բրդի թել արտադրելու համար կորչում է մոտ 620 մարդ-օր:

Բայց հապար կոստյում, բրդից ոչ պակաս որակով ու դիմացկուն, մեկ կարող է նվիրել... 2 խորանարդ մետր մշակված փայտը: Ըստ որում աշխատանքային ծախսերն էլ գրեթե տաս անգամ ավելի պակաս են, քան բրդե կտորի ստացման պրոցեսի ժամանակ:

Իսկ մեկ տոննա էթիլեն գազը և երկուսուկես տոննա քլորը հրաշք-գործարաններում վեր են ածվում կանացի և տղամարդու հագարավոր ձեռք սպիտակեղենի:

Դուք, իհարկե, գուշակեցիք, որ այս հրաշքների «հեղինակը» ԿԱԽԱՐԴՈՒՀԻ ՔԻՄԻԱՆ Է:

Ժողովրդական տնտեսության մեջ այդ գիտության նշանակության մասին կարելի է անվերջ խոսել: Բայց ավելի լավ է ձայնը տանք թվերին:

● 1965 թվականին քիմիական մանրաթելերի արտադրանքի պլանը կատարելու համար պահանջվում է մոտ 100 000 բանվոր: Իսկ նույն քանակությամբ բրդե և բամբակե մանրաթել ստանալու համար կպահանջվեր վեց անգամ ավելի բանվոր:

● Մեկ տարվա ընթացքում տիպային գործարանը թողարկում է մոտ 40.000 տոննա շտապելային մանրաթել, որը պատրաստվում է բնական գազից: Դա այնքան գործվածք է, որքան վուշե կտավ էր արտադրվել 1955 թվականին ամբողջ Բելոռուսական ՍՍՌ-ում ստացված վուշի բերքից:

● Էնանտի մանրաթելի մեկ տոննան 10 անգամ ավելի էժան է, քան մեկ տոննա բնական բուրդը:

● Մեկ կովի կամ եզան կաշվից ստանում են 40 կուլգ կոշկի ներբան: 20 կուլգ կոշկի երես պատրաստելու համար հարկավոր է մեկ հասուն խոզի կամ ոչխարի կաշի: Որպեսզի մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացուն ապահովեն միայն մեկ կուլգ կաշվե կոշիկով, պահանջվում է ավելի քան հինգ միլիոն խոշոր եղջերավոր անասունի և ութ միլիոն խոզի կամ ոչխարի կաշի: Դա 1932 թվականի կոլտնտեսություններում եղած խոշոր ու մանր եղջերավոր անասունների և խոզերի ամբողջ գլխաքանակի գրեթե կեսն է:

● Մինչդեռ, ամենատարբեր տեսակների ու ձևերի բարձրորակ կաշի են պատրաստում... գազից: Արհեստական կաշի արտադրելու ժամանակակից մակարդակն արդեն թույլ է տալիս «տնտեսելու» 30 միլիոն գլուխ անասուն:

digitised by A.R.A.R.@